ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքսուորլդ ՍՊԸ-ն ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-27/6 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	համազգեստ	Տեքսուորլդ ՍՊԸ	Տեքսուորլդ ՍՊԸ	1 35811170/501 համազգեստ 1. շապիկ կարճաթև (պոլո մոդելի)՝ 12 հատ, կանաչավուն բամբակյա կտորից: Շապիկի հետևամասը և առաջամասը բաղկացած են 2 կտորից՝ ծալովի օձիքով, կրծքամասում՝ 3 կոճակներով՝ 11 սմ տրամագծով կոճկվող կափույրով, թևքերը՝ կարճ, երկակի կարով: Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, 10-11 սմ երկարությամբ, 2,0 սմ լայնությամբ կպչուն ժապավեններ, որտեղ ամրացվում են անունը, ազգանունը և ստորաբաժանումը: Շապիկի թևքերին կարվում են շրջանաձև կպչուն ժապավեններ, տրամագիծը՝ 80 մմ, ուսակարից 70 մմ ներքև, որտեղ ձախ թևքին ամրացվում է Տեսչական մարմնի տարբերանշանը, իսկ աջ թևքին՝ Հայաստանի Հանրապետության դրոշը (ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 836-ն որոշման N 1 հավելվածի

				նկարներ NN 3 և 4): 2. շապիկ երկարաթև (պոլո մոդելի)՝ 6 հատ մուգ կանաչավուն կտորից: Շապիկի հետևամասը և առաջամասը բաղկացած են 2 կտորից, ծալովի օձիքով, կրծքամասում՝ 3 կոճակներով կոճկվող կափույրով, հետևամասը՝ վերին կտրվածքով, թևքերը՝ երկար, 2 կոճակներով կոճկվող թեզանիքներով: Շապիկի պարանոցից ներքև մշակվում է վրադիր կտոր, որի վրա մշակվում են 3 օղակներ և կարվում 3 կոճակներ՝ 10 մմ տրամագծով: Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, 10-11 սմ երկարությամբ, 2,0 սմ լայնությամբ կպչուն ժապավեններ, որտեղ ամրացվում են անունը, ազգանունը և ստորաբաժանումը: Ներքևում՝ կարագծերում անցկացված է էլաստիկ ժապավեն: Շապիկի թևքերին կարվում են շրջանաձև կպչուն ժապավեններ, տրամագիծը՝ 80 մմ, ուսակարից 70 մմ ներքև, որտեղ ամրացվում են Տեսչական մարմնի տարբերանշանը և Հայաստանի Հանրապետության դրոշը (ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 836-ն որոշման N 1 հավելվածի նկարներ NN 5 և 7): 3. տաբատ կիսաբամբակյա՝ 6 հատ, մուգ կանաչավուն կիսաբամբակյա կտորից: Գոտին՝ 10 մմ լայնությամբ 5 գոտեմակողերով, գոտեփոկի անցկացման համար կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա: Կոճկվում է 15 մմ տրամագծով կոճակով, 16 սմ երկարությամբ շղթայով: Կողային գրպանները թեք են՝ 16 սմ բացվածքով: Թեք գրպանների ներքևի մասում կարվում են մեծ գրպաններ: Առաջամասում՝ մինչև ծնկները, մշակվում է աստառ: Հետևամասի աջ կողմում ներկարված գրպան՝

				13-14 սմ բացվածքով (ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 836-ն որոշման N 1 հավելվածի նկարներ NN 2,3 և 5): 4. տաբատ կիսաբրդյա (50 % բուրդ, 50 % սինթետիկ)՝ 2 հատ, մուգ կանաչավուն կիսաբրդյա կտորից: Գոտին՝ 20 մմ լայնությամբ 5 գոտեմակողերով, գոտեփոկի անցկացման համար կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա: Կոճկվում է 15 մմ տրամագծով կոճակով, 16 սմ երկարությամբ շղթայով: Կողային գրպանները թեք են՝ 16 սմ բացվածքով: Թեք գրպանների ներքևի մասում կարվում են մեծ գրպաններ: Առաջամասում մինչև ծնկները մշակվում է աստառ: Հետևամասի աջ կողմում ներկարված գրպան՝ 13-14 սմ բացվածքով (ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 836-ն որոշման N 1 հավելվածի նկարներ NN 1 և 6): 5. կիսաշրջազգեստ՝ 6 հատ, կազմված առաջամասից, հետևամասից և ներկարված գոտուց՝ մուգ կանաչավուն կիսաբամբակյա կտորից, ուղիղ կտրվածքով, մինչ ծունկը ծածկող երկարության: Հետևամասի ներքևում 9 սմ բացվածքով, հետևից վերնամասը կոճկվում է 16 սմ երկարությամբ շղթայով, որը գոտու վրա կոճկվում է 14 մմ երկարությամբ 1 կոճակ օղակով (ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 836-ն որոշման N 1 հավելվածի նկարներ NN 4, 7 և 8): Պատվիրատուի կողմից կիսաշրջազգեստ պատվիրելու դեպքում 3-րդ կետով նախատեսված 6 հատ կիսաբամբակյա տաբատները չեն մատակարարվում: 6. սվիտեր՝ 3 հատ, մուգ կանաչավուն ակրիլանից (400 գրամ քմ), կլոր վզով:

				Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, 10-11 սմ երկարությամբ, 2,0 սմ լայնությամբ կպչուն ժապավեններ, որտեղ ամրացվում են անունը, ազգանունը և ստորաբաժանումը։ Ուսագլուխների և արմունկների հատվածում ամրացվում է կանաչ գույնի կտոր։ Թևքերին կարվում են շրջանաձև կպչուն ժապավեններ, տրամագիծը՝ 80 մմ, ուսակարից 70 մմ ներքև, որտեղ ամրացվում են Տեսչական մարմնի տարբերանշանը և Հայաստանի Հանրապետության դրոշը։ 7. կիսավերարկու (գարնանային/աշնանային)՝ 1 հատ, մուգ կանաչավուն անջրանցիկ (40 % բամբակ, 60 % սինթետիկ) անջրաթափանց) կտորից։ Կիսավերարկուն բաղկացած է թևքերից, կանգուն օձիքից։ Օձիքը երկակի է, ներսում շղթայի տակ նախատեսված է գլխարկ։ Գլխարկն ունի կարգավորիչ, կպչուն ժապավեն։ Կիսավերարկուն կոճկվում է 60-65 սմ երկարությամբ շղթայով։ Գոտու կողային մասերն ունեն 14-20 սմ երկարությամբ առաձգական ժապավեն։ Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, 10-11 սմ երկարությամբ, 2,0 սմ լայնությամբ կպչուն ժապավեններ, որտեղ ամրացվում են անունը, ազգանունը և ստորաբաժանումը, իսկ թիկունքի մասում՝ «Բ Ը Տ Մ» բառերը։ Թիկնամասը և լանջափեշերը՝ կրծքամասում կտրվածքով։ Լանջափեշերի ներքևի մասում թեք ներկարված են 16 սմ բացվածքով գրպաններ։ Առջևի 2 լանջափեշերի վերևամասում կափույրի տակ ներկարվում են 15 սմ երկարությամբ շղթայով փակվող գրպաններ, ձախ կողմում ծոցագրպան։ Թևքերը երկկարանի են։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом VLLP-S-ԼԱՃԱՊՁԲ-27/6 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
1				Ներքևում՝ կարագծերում անցկացված է էլաստիկ ժապավեն: Կիսավերարկուի թևքերին կարվում են շրջանաձև կպչուն ժապավեններ, տրամագիծը՝ 80 մմ, ուսակարից 70 մմ ներքև, որտեղ ձախ թևքին ամրացվում է Տեսչական մարմնի տարբերանշանը, իսկ աջ թևքին՝ Հայաստանի Հանրապետության դրոշը (ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 836-ն որոշման N 1 հավելվածի նկարներ NN 6 և 8): 8. կիսավերարկու (ձմեռային)՝ 1 հատ, մուգ կանաչավուն անջրանցիկ (անջրաթափանց, օքսֆորդ) կտորից: Կիսավերարկուն բաղկացած է լանջափեշերից, թևքերից, հետ ծալվող օձիքից և հանվող (շղթա) գլխարկից, որն ունի կարգավորիչ, կպչուն ժապավեն: Կիսավերարկուն մինչև գոտկատեղը ձգվող գոտիով և հանվող տաք ներդիրով՝ կայծակաճարմանդով (շղթա), բաճկոնին կոճկվում է հանովի արհեստական մորթե օձիք, որը կոճկվում է 7 օղակներով և բաճկոնի օձիքին կարված 7 հատ 15 մմ տրամագծով պլաստմասսայե կոճակներ: Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, 10-11 սմ երկարությամբ, 2,0 սմ լայնությամբ կպչուն ժապավեններ, որտեղ ամրացվում են անունը, ազգանունը և ստորաբաժանումը, իսկ թիկունքի մասում՝ «Բ Ը Տ Մ» բառերը: Կիսավերարկուն կոճկվում է 60-65 սմ երկարությամբ շղթայով: Գոտու կողային մասերն ունեն 14-20 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Թիկնամասը և լանջափեշերը՝ կրծքամասում կտրվածքով: Լանջափեշերի ներքևի մասում թեք ներկարված են 16 սմ բացվածքով գրպաններ: Առջևի 2 լանջափեշերի վերևամասում կափույրի տակ

				ներկարվում են 15 սմ երկարությամբ շղթայով փակվող գրպաններ, ձախ կողմում ծոցագրպան: Թևքերը երկկարանի են: Ներքևում՝ կարագծերում անցկացված է էլաստիկ ժապավեն: Կիսավերարկուի թևքերին կարվում են շրջանաձև կպչուն ժապավեններ, տրամագիծը՝ 80 մմ, ուսակարից 70 մմ ներքև, որտեղ ամրացվում են Տեսչական մարմնի տարբերանշանը և Հայաստանի Հանրապետության դրոշը (ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 836-ն որոշման N 1 հավելվածի նկարներ N 1): 9. գլխարկ ամառային՝ 3 հատ, մուգ կանաչավուն գլխարկ (կեպի), բամբակ 100 %, հետնամասում ամրանում է ճարմանդով: Ջրադիմացկուն, բարձրորակ, խիտ գործվածք է: Առաջամասում ասեղնագործվում է Տեսչական մարմնի տարբերանշանը (ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 836-ն որոշման N 1 հավելվածի նկարներ NN 1, 2, 3, 4, 5, 6, 7 և 8): 10. գլխարկ ձմեռային՝ 3 հատ, մուգ կանաչավուն կիսաբամբակյա ձմեռային տաք գլխարկ (55-60 չափսերի), առաջամասում ասեղնագործվում է Տեսչական մարմնի տարբերանշանը: 11. գոտի տաբատի՝ 3 հատ, սինթետիկ գործվածքից, 35 մմ լայնությամբ, մետաղական ճարմանդով: 12. գրպանիկներ գոտիի համար՝ 3 հատ, սև սինթետիկ նյութից, ամրացվում են գոտիի վրա: Նախատեսված են զենք, հատուկ միջոցներ և պարագաներ կրելու համար: